ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1953 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻՆ

1953 թ. սեպտեմբերի 7-ին և 8-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի գահլիճում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության և արվեստի ինստիտուտի գիտական սեսիան, նվիրված Լ. Ն. Տոլստոյի ծննդյան 125-ամյակին։

Ներածական խոսքով սեսիան բաց արեց ինստիտուտի գիրեկտոր Հ. Մամիկոնյանը, որից հետո լսվեցին հետևյալ զեկուցումները.— «Վ. Ի. Լենինը Տոլստոյի մասին», զեկուցող՝ ֆիլ. գիտ. թեկնածու Է. Թովչյան, «Լ. Ն. Տոլստոյը և հայ գրականությունը», զեկուցող՝ ֆիլ. գիտ. թեկնածու Գ. Հովնան, «Տիպականության հարցը Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործություններում», զեկուցող՝ ֆիլ. գիտ. թեկնածու Զ. Ղուկասյան, Լ. Ն. Տոլստոյը հայ թատրոնում», զեկուցող՝ ֆիլ. գիտ. թեկնածու Ռ. Զարյան։

Սեսիայում կարդացված զեկուցումների մի մասը կտպագրվի «Տեղեկագրի» հերթական համարներում։